Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____» 2020 թվականի N ____Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման NN 1, 2, 3, 4, 5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է կենսաթոշակների, նպաստների և այլ վճարատեսակների ֆինանսավորման գործառույթի իրականացումն ապահովելու հանգամանքով:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Նախագծով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով (այսուհետ՝ Բյուջե) նախատեսված ծրագրերի (միջոցառումների) համար հատկացումների գծով միջծրագրային վերաբաշխումներ: Մասնավորապես.

Սոցիալական ապահովության ծառայության միջոցով իրականացվող ծրագրերի (միջոցառումների) համար՝

Ավելացնել 9 ամսվա և տարեկան միջոցառումներին՝

- 1068 «Ժողովրդագրական վիճակի բարելավում» ծրագրի.
- «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» 12002 միջոցառում,
- 1102 «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրի.

- «Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» 12001 միջոցառում

➢ 1068 «Ժողովրդագրական վիճակի բարելավում» ծրագրի.

- «Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովում» **11001** միջոցառում

➢ 1205 «Սոցիալական ապահովություն» ծրագրի

- «Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» 12002 միջոցառում,

➢ 1082 «Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում» ծրագրի.

- «Ժամանակավոր անաշխատունակության նպաստ» 12001 միջոցառում,
- «Մայրության նպաստ» 12002 միջոցառում,

նվազեցնել *9 ամսվա և տարեկան միջոցառումներից՝*

➢ 1011 «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի

- «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում» 11001 միջոցառում,

➢ 1011 «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» 12001 միջոցառում:

➢ 1102 «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրի.

- «Աշխատանքային կենսաթոշակներ» 12003 միջոցառում

Այսպես.

➢ **Բյուջեով 1068 «Ժողովրդագրական վիճակի բարելավում» ծրագրի.**

«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» 12002 միջոցառման գծով առկա են հետևյալ ցուցանիշները՝

Բյուջեով հաստատված **տարեկան թվաքանակ՝ 36200** երեխա, **տարեկան գումար՝** **13,755,350.0** հազար դրամ,

	Տարի /թվաքանակ/	**Ի կիսամյակ հաստատված** /թվաքանակ/	**Ի կիսամյակ /իրավունք ձեռք** բերած /թվաքանակ/	**9 ամիս Հաստատված** /թվաքանակ/	**9 ամսվա *լրացուցիչ*** *պահանջ* /թվաքանակ/	***Լրացուցիչ պահանջ*** /գումար/ (հազար դրամ)
Ընդամենը	**36200**	**14480**	**17420**	**25340**	***3672***	**1,237,900.0**
1-ին և 2-րդ երեխա՝	27874	11150	12832	19511	*3483*	1,044,900.0
3-րդ և 4-րդ երեխա՝	7998	3199	4380	5599	*181*	181,000.0
5 և ավելի երեխա՝	328	131	208	230	*8*	12,000.0

Բյուջեով **9 ամսվա** համար հաստատվել է՝ 9,628,745.0 հազար դրամ, իրականացվել է միջեռամսյակային տեղաշարժ՝ ***392,180.0*** հազար դրամ, **ճշտված բյուջե՝** **10,020,925.0** հազար դրամ:

Ի կիսամյակի ընթացքում **փաստացի ծախսը** կազմել է՝ **5,825,250.0** հազար դրամ, իսկ արդեն **Հուլիս** ամսվա ծախսը՝ 1,812,450.0 հազար դրամ, 7 ամսվա ծախսը կազմել է՝ **7,637,600.0** հազար դրամ:

Ըստ այդմ, հաշվի առնելով, որ կիսամյակի միջին ամսական ծախսի նկատմամբ վերջին ամսվա ծախսը աճել է 86%-ով՝ պայմանավորված 2020թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով, ինչպես նաև ըստ հերթական կարգաթվերի երեխաների թվաքանակի աճի տենդենցը՝ **9 ամսվա** կանխատեսվող պահանջը կկազմի շուրջ **11,258,825.0** հազար դրամ: Այսպիսով՝ **9 ամսվա և տարեկան** պահանջի ֆինանսավորման համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցները կկազմեն՝ ***1,237,900.0*** հազար դրամ:

- **Բյուջեով 1068 «Ժողովրդագրական վիճակի բարելավում» ծրագրի.**

«Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովում» 11001 միջոցառման գծով Բյուջեով տարեկան գումար է հատատվել՝ **10,056,7** հազար

դրամ: 9 ամսվա 7,039.7 հազար դրամ հաստատված բյուջեի պայմաններում 7 ամսվա փաստացի ծախսը կազմել է՝ 7,039.7 հազար դրամ:

Տարեկան կանխատեսվող պահանջը կկազմի շուրջ՝ 14,526.7 հազար դրամ, ուստի անհրաժեշտ լրացուցիչ միջոցները կկազմեն 9 ամսվա համար շուրջ ***2850.0*** հազար դրամ և տարեկան ***4,470.0*** հազար դրամ:

- **Բյուջեով 1082 «Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում» ծրագրի**.

«Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ» 12001 միջոցառման գծով Բյուջեով հաստատվել է տարեկան **1,643,056.1** հազար դրամ:

9 ամսվա համար հաստատվել է՝ 985,833.7 հազար դրամ, 1-ին կիսամյակում իրականացված ***657,222.4*** հազար դրամ միջեռամսյակային տեղաշարժի արդյունքում 9 ամսվա ճշտված Բյուջեն կազմել է **1,643,056.1** հազար դրամ (տարեկան հաստատված գումարի 100%-ը):

1-ին կիսամյակում **փաստացի ծախսը** կազմել է՝ **1,587,493.0** հազար դրամ:

Հուլիս ամսվա ծախսը կազմել է 52,120.9 հազար դրամ, 7 ամսվա փաստացի ծախսը կազմել է՝ **1,639,613.9** հազար դրամ:

ՊԵԿ 2020 թվականի հունիս ամսվա հայտի պահանջը մասամբ ֆինանսավորելուց հետո դեռևս ենթակա է ֆինսանսավորման՝ **488,125.5** հազար դրամ:

Հաշվի առնելով միջոցառման գծով ամսական պահանջի աճի տենդենցը, ինչպես նաև հատկապես ներկա պայմաններում հիվանդությունների թվի աճը և դրան զուգահեռ հուլիս ամսվա պահանջի աճը՝ ***540,125.3*** հազար դրամ՝ **տարեկան կանխատեսվող նվազագույն** պահանջը կկազմի ***4,015,033.6*** հազար դրամ, ուստի անհրաժեշտ լրացուցիչ միջոցները կկազմեն 9 ամսվա համար **նվազագույնը** ***1,011,464.3*** հազար դրամ և 10 ամսվա **նվազագույնը** ***1,575,419.7*** հազար դրամ:

- **Բյուջեով 1082 «Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում» ծրագրի «Մայրության նպաստ» 12002** միջոցառման գծով.

Բյուջեով տարեկան ծախս է հաստատվել՝ **8,268,255.6** հազար դրամ:

9 ամսվա Բյուջեն հաստատվել է 7,441,430.0 հազար դրամ, իրականացվել է միջեռամսյակային տեղաշարժ ***170,406.8*** հազար դրամի չափով, ճշտված Բյուջեով կազմել է՝ **7,611,836.2** հազար դրամ, որով 9 ամսվան հատկացվել է տարեկան հաստատված գումարի 92.1%-ը:

1-ին կիսամյակում **փաստացի ծախսը** կազմել է՝ **5,131,094.4** հազար դրամ:

Հուլիս ամսվա ծախսը կազմել է՝ 1,624,355.9 հազար դրամ (ՊԵԿ-ին ֆինանսավորել է հունիս ամսվա՝ 789,098.5 հազար դրամ, որը ներառում է ՊԵԿ-ի մայիս ամսվա հայտի պահանջի պարտքը՝ 347,331.0 հազար դրամ): 7 ամսվա **փաստացի** ծախսը կազմել է՝ **6,755,449.02** հազար դրամ:

Տարեկան կանխատեսվող պահանջը կկազմի շուրջ **10,775,255.0** հազար դրամ, ուստի անհրաժեշտ լրացուցիչ միջոցները կկազմեն՝ 9 ամսվա ***1,023,914.0*** հազար դրամ և տարեկան նվազագույնը ***2,507,000.0*** հազար դրամ:

- **Բյուջեով 1102 «Կենսաթոշակային ապահովության» ծրագրի.**

«Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» 12001 միջոցառման գծով

Բյուջեով տարեկան հաստատվել է՝ **30,133,718.5** հազար դրամ:

9 ամսվա Բյուջեն հաստատվել է՝ 22,901,626.1 հազար դրամ, իրականացվել է միջեռամսյակային տեղաշարժ ***198,494.6*** հազար դրամ, ճշտված Բյուջեով կազմել է՝ **23,100,120.7** հազար դրամ:

1-ին կիսամյակի փաստացի ծախսը կազմել է՝ **15,539,964.8** հազար դրամ, հուլիս ամսվա ծախսը կազմել է՝ **2,571,042.7** հազար դրամ:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսների կանխատեսվող պահանջը կկազմի շուրջ՝ 5,200,000.2 հազար դրամ (Բյուջեի հաստատման ժամանակ հաշվարկներում չի ներառվել զինվորական ստաժի մեկ տարվա արժեքի ավելացումը՝ 100 դրամով), ուստի 9 ամսվա անհրաժեշտ լրացուցիչ միջոցները կկազմեն շուրջ **210,887.0** հազար դրամ, իսկ տարեկան անհրաժեշտ լրացուցիչ գումարը՝ **980,000.0** հազար դրամ:

- **Բյուջեով 1205 «Սոցիալական ապահովություն» ծրագրի.**

«Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» 12002 միջոցառման գծով

Բյուջեով տարեկան հաստատվել է՝ **4,402,000.0** հազար դրամ:

Բյուջեով 9 ամսվա համար հաստատվել է՝ 3,433,560.0 հազար դրամ, իրականացվել է միջեռամսյակային տեղաշարժ **255,000.0** հազար դրամ, ճշտված Բյուջեն կազմել է՝ **3,688,560.0** հազար դրամ:

1-ին կիսամյակի ժամանակահատվածում փաստացի ծախսը կազմել է՝ 2,571,122.5 հազար դրամ, իսկ հուլիս ամսվա ծախսը կազմել է 470,705.0 հազար դրամ:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսների կանխատեսվող պահանջը կկազմի շուրջ **996,732.5** հազար դրամ, տարեկան պահանջը՝ 4,962,000.0 հազ.դրամ:

Այսպիսով, միջոցառման գծով **լրացուցիչ պահանջը** կկազմի՝ **9 ամսվա համար՝ *350,000.0*** հազար դրամ, **տարեկան՝ *560,000.0* հազար դրամ,** որի ապահովումն առաջարկվում է իրականացնել միջհոդվածային տեղաշարժի միջոցով:

Հաշվի առնելով, որ I կիսամյակի կենսաթոշակառուների, նպաստառուների մահերի թիվը կազմել է 12855՝ կենսաթոշակառուների, նպաստառուների մահերի 9 ամսվա թվի կանխատեսվող աճը կկազմի շուրջ՝ 1750 անձ, իսկ տարեկան՝ 2800:

- **Բյուջեով 1102 «Կենսաթոշակային ապահովության» ծրագրի.**

«Աշխատանքային կենսաթոշակներ» 12003 միջոցառման գծով

Բյուջեով տարեկան հաստատվել է՝ 246,472,032.3 հազար դրամ,

9 ամսվա Բյուջեն հաստատվել է՝ 183,868,136.1 հազար դրամ:

1-ին կիսամյակի փաստացի ծախսը կազմել է՝ **119,628,959.0** հազար դրամ, 7 ամսվա ծախսը կազմում է **139,417,754.0** հազար դրամ:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսների կանխատեսվող պահանջը կկազմի շուրջ՝ 43,000,000.0 հազար դրամ (Բյուջեի հաշվարկներում ներառվել է Հանրապետությունից բացակայող կենսաթոշակառուների թվաքանակի և նախորդ տարվա չվճարված կենսաթոշակների ամիսների աճը), ըստ այդմ 9 ամսվա *600,000.0* հազար դրամ

տնտեսվող գումարը առաջարկվում է նվազեցնել՝ իրականացնելով միջծրագրային վերաբաշխում:

➢ **Բյուջեով 1011 «Անապահով խմբերին սոցիալական աջակցության» ծրագրի.**

«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման իրականացման ապահովում» 11001 միջոցառման գծով

Տարեկան ճշտված Բյուջեով ծախս է հաստատվել՝ 372,223.8 հազար դրամ,

9 ամսվա համար ճշտված Բյուջեով ծախս է հաստատվել է՝ **261,961.2** հազար դրամ, 7 ամսվա ծախսը կազմել է 150,099.9 հազար դրամ (ֆինանսավորվել է հունիս ամիսը):

Հուլիս-դեկտեմբեր ամիսների կանխատեսվող պահանջը (միջինի հաշվարկով) կկազմի շուրջ՝ **150,100.0** հազար դրամ, ըստ այդմ *տնտեսվող* գումարը կկազմի շուրջ՝ *65,000.0* հազար դրամ:

Առաջարկվում է *տնտեսվող* գումարներից նվազացնել՝ 9 ամսվա **32,049.5** հազար դրամը և տարեկան՝ **62,027.5** հազար դրամ՝ իրականացնելով միջծրագրային վերաբաշխում:

1011 «Անապահով խմբերին սոցիալական աջակցության» ծրագրի.

«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» 12001

միջոցառման գծով ճշտված Բյուջեով տարեկան ծախս է հաստատվել՝ 37,227,144.8 հազար դրամ, պակասեցվել է՝ **300,000.0** հազար դրամ, ճշտված կազմել է՝ 36,927,144.8 հազար դրամ:

I կիսամյակի ճշտված Բյուջեն կազմել է՝ 16,284,853.8 հազար դրամ, ծախսը կազմել է 15,060,494.8 հազար դրամ:

9 ամսվա ճշտված Բյուջեն կազմել է ՝ **26,081,184.6** հազար դրամ:

Հուլիս ամսվա ծախսը կազմել է **2,567,866.0** հազար դրամ:

9 ամսվա և տարեկան *տնտեսվող* գումարը կկազմեն համապատասխանաբար շուրջ՝ 3,260,000.0 հազար դրամ և 6,450.000.0 հազար դրամ:

Առաջարկվում է *տնտեսվող* գումարից նվազեցնել 9 ամսվա **3,204,966.0** հազար դրամ և տարեկան **6,202,762.2** հազար դրամ՝ իրականացնելով միջծրագրային վերաբաշխում:

Այսպիսով, 1011 և 1102 ծրագրերից ընդամենը նվազեցվող գումարները կկազմեն՝ 9 ամսվա՝ **(3,837,015.5)** հազար դրամ և տարեկան՝ **(6,864,789.7)** հազար դրամ, և նույն չափով կավելացվեն 1068, 1082, 1102, 1205 ծրագրերին:

3. Առկա խնդրի առաջարկվող լուծումը

Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համապատասխան ծրագրերի (միջոցառումների) գծով միջծրագրային վերաբաշխումներ:

4. Կարգավորման առարկան

Նախագծով առաջարկվում է կատարել տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված բյուջետային ելքերի գծով ՀՀ կառավարության կողմից հաստատած արդյունքային (կատարողական) ցուցանիշների փոփոխմանը չհանգեցնող վերաբաշխումներ:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագիծն ընդունվելու դեպքում կապահովվի կենսաթոշակների, նպաստների և այլ վճարների, սահմանված ժամկետներում, վճարման գործառույթի պատշաճ իրականացումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: